

Փոխվարչապետն այցելեց Վայոց ձորի մարզ

08.08.2012

ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանն այսօր այցելեց Արարատի եւ Վայոց ձորի մարզեր՝ առաջնահերթ խնդիրների լուծման երրորդ հրատապ ծրագրով իրականացվող շինաշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով:

Արարատի մարզից Ա.Գեւորգյանը մեկնեց Վայոց ձորի մարզ: Մարզպետ Էդգար Ղազարյանի ուղեկցությամբ Ռինդ գյուղում ծանոթացավ համայնքի կոյուղագծի շինարարության ընթացքին: Կոյուղագիծն անցկացվել է երկրորդ հրատապ ծրագրով հատկացված 25 մլն դրամով: Փոխվարչապետի հետ քննարկվեց համայնքում կոյուղաջրերի մաքրման կայանի կառուցման համար ֆինանսական աղբյուրների հնարավորությունները: Հաշվի առնելով դեղձի այս տարվա առատ բերքը, Ռինդ համայնքի ղեկավարը Ա. Գեւորգյանի մոտ բարձրացրեց դեղձի իրացման խնդիրը եւ մթերման կազմակերպման հարցում ակնկալեց կառավարության աջակցությունը: Մարզի Մարտիրոս համայնքի երիտասարդական կենտրոնը վերանորոգվել է ՕԲՄՖԱՄ բարեգործական կազմակերպության աջակցությամբ, սակայն աշխատանքները կիսավարտ են մնացել: Համայնքում Ա. Գեւորգյանի մոտ բարձրացվեց երրորդ հրատապ ծրագրով տնտեսված գումարներից 2,4 մլն դրամն անավարտ աշխատանքների համար հատկացնելու հարցը: Համայնքի բնակիչները Ա.Գեւորգյանին ներկայացրին մի շարք խնդիրներ, նշելով, որ հատկապես առաջնահերթ են համայնքի վթարային բնակելի տների հարցի լուծումը, ինչպես նաեւ համայնքային մշակույթի տան վերանորոգումը:

Բարձրունի համայնքում փոխվարչապետը քննարկեց դպրոցի շենքի ամրացման աշխատանքների ընթացքը: Երրորդ հրատապ ծրագրով այս նպատակով հատկացվել է 10,5 մլն դրամ: Փոխվարչապետին զեկուցվեց, որ նախագծային աշխատանքներն ավարտված են, շուտով կմեկնարկեն շինաշխատանքները եւ կավարտվեն հոկտեմբերին: Համայնքի բնակիչները Ա. Գեւորգյանին դիմեցին ռոտզման ցանցի վերանորոգման հարցով, որը հնարավորություն կտա մշտապես ռոտզելի դարձնել եւ մշակել 100 հա գյուղատնտեսական նշանակության հող: Գյուղացիները բարձրացրին նաեւ Սերս-Բարձրունի ճանապարհի վերանորոգման խնդիրը եւ ակնկալեցին կառավարության աջակցությունը:

Վայոց ձորին առաջնահերթ խնդիրների լուծման հրատապ երեք ծրագրերով հատկացվել է 780 մլն դրամ: Ընդհանուր առմամբ՝ երեք ծրագրերով մարզի 16 համայնքներում իրականացվել եւ ընթացքի մեջ է 51 ծրագիր:

Այցի ավարտին փոխվարչապետը մարզպետարանում հրավիրված խորհրդակցության ընթացքում մարզպետարանի պատասխանատուների հետ քննարկեց մարզի առաջնահերթ խնդիրներին՝ սեփական եկամուտների հավաքագրմանը, գյուղատնտեսական բերքի իրացմանը, ռոտզման կազմակերպմանը վերաբերող հարցեր:

Աղբյուրը՝ mta. gov. am